


Հաստատված է  
« Հայաստանի հաշվապահների  
և աուդիտորների ասոցիացիայի»  
խորհրդի նիստում N 8  
«11» հունիսի 2013թ.  
խորհրդի նախագահ  
Ա. Չիլինգարյան

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**  
**“ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ”**  
**ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ /ՀՀԱԱ/  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ**

***Գլուխ 1` ՀՀԱԱ որակավորման համակարգի նկարագրությունը և կառուցվածքը***

1. ՀՀԱԱ որակավորման համակարգը կազմված է Հաշվապահների միջազգային դաշնության` ՀՄԴ, (International Federation of Accountants, IFAC) կրթական ստանդարտների հիման վրա /Handbook of International Education Pronouncements/: Հաշվապահների միջազգային դաշնության ութ կրթական ստանդարտները սահմանում են պրոֆեսիոնալ հաշվապահի /աուդիտորի/ պատրաստման` ներառյալ կրթության, մասնագիտական փորձի և շարունակական մասնագիտական զարգացման ապահովման համար անհրաժեշտ միջազգային պահանջները:
2. Հաշվապահների միջազգային դաշնության (International Federation of Accountants, IFAC) կրթական ստանդարտների հիման վրա ՀՀԱԱ որակավորման համակարգի իրականացումը հանդիսանում է ՀՀԱԱ կողմից ստանձնած ՀՄԴ անդամակցության պարտադիր պահանջ /Statement of Membership Obligation 2 /:
3. ՀՀԱԱ որակավորման համակարգը ներառում է կրթական հատված և մասնագիտական աշխատանքային փորձ: Կրթական պահանջները ներառում են մասնագիտական կրթությունը, որը տրվում է ՀՀԱԱ քննական յոթ առարկաների միջոցով, և ընդհանուր կրթությունը:

ՀՀԱԱ որակավորման համակարգի սխեմատիկ պատկերը հետևյալն է.



4. ՀՀԱԱ որակավորման համակարգի կրթական հատվածը ներառում է երկու բաղադրիչ.

ա/. Կրթական առարկաների անվանումը, նպատակ, բովանդակություն և գնահատման մեթոդաբանություն,

բ/. Գիտելիքի ստուգման բաղադրիչ, այն է քննությունների անցկացման պատշաճ կազմակերպում:

5. ՀՀԱԱ որակավորման համակարգը իրագործվում է երեք մակարդակով. **“Վկայագրված հաշվետար”, “Որակավորված հաշվապահ”, “Որակավորված աուդիտոր”** :

6. Առաջին մակարդակում ներառված են երկու քննական առարկաներ՝ **“Ֆինանսական հաշվառման հիմունքներ”** և **“Ֆինանսական տեղեկատվություն կառավարման համար”**: Առաջին մակարդակի առարկաների քննությունները հանձնելու դեպքում մասնակիցը ստանում է **“Վկայագրված հաշվետար”**-ի որակավորում և վկայական:

7. Երկրորդ մակարդակում ներառված են չորս քննական առարկաներ՝ **“Իրավագիտության հիմունքներ”, “ՀՀ հարկային օրենսդրություն”, “Ֆինանսական կառավարում և վերահսկողություն”, “Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում”**:

8. ՀՀԱԱ որակավորման համակարգի մասնակիցը ստանում է **“Որակավորված հաշվապահ”**-ի որակավորում և համապատասխան վկայական, եթե.

ա/. հանձնել է առաջին և երկրորդ մակարդակի առարկաների քննությունները,

բ/. ունի բարձրագույն կրթություն,

գ/. ունի նվազագույնը 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

9. Երրորդ մակարդակում ներառված է մեկ առարկա՝ *“Առուղիտ և ներքին վերահսկողություն”*:

10. ՀՀԱԱ որակավորման համակարգի մասնակիցը ստանում է *“Որակավորված առուղիտոր”*-ի որակավորում և համապատասխան վկայական, եթե.

ա/. հանձնել է առաջին, երկրորդ և երրորդ մակարդակի առարկաների քննությունները,

բ/. ունի բարձրագույն կրթություն,

գ/. ունի նվազագույնը 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

11. ՀՀԱԱ որակավորման քննությունների ծրագիրը, այն է քննական առարկաների անվանումները, նպատակը, բովանդակությունը և գնահատման մեթոդները ներկայացված են հավելված 1-ում:

12. ՀՀԱԱ որակավորման համար մասնագիտական աշխատանքային փորձի բնույթի և կառուցվածքի նկատմամբ պահանջները ու դրա գնահատման հարցերը կարգավորվում են *“ՀՀԱԱ որակավորման նպատակով մասնագիտական աշխատանքային փորձատության (ստաժի) պահանջների և գնահատման կարգ”*-ով (Հաստատված է ՀՀԱԱ Խորհրդի 21.05.2013թ.-ի թիվ 5 նիստում):

Փաստաթուղթը նախապես հասանելի դարձվում ՀՀԱԱ որակավորման համակարգի մասնակիցներին:

## ***Գլուխ 2. Դասընթացների կազմակերպումը, գիտելիքի ստուգում և քննությունների անցկացումը***

13. ՀՀԱԱ որակավորման համակարգի քննական յոթ առարկաների գծով **դասընթացները** կազմակերպվում են տարին երկու անգամ՝ ապրիլ-հուլիս և հոկտեմբեր-հունվար ամիսներին, յուրաքանչյուր դասընթացը 40 ժամ տևողությամբ:

14. ՀՀԱԱ որակավորման համակարգի դասընթացներին կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

15. ՀՀԱԱ որակավորման համակարգի դասընթացներին մասնակցելու համար դիմորդը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը`
  - 15.1 դիմում (հավելված 2)
  - 15.2 անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճեն,
  - 15.3 լուսանկար 1 հատ` 3 x 4 չափի,
  - 15.4 դասընթացի համար վճարումը հավաստող փաստաթուղթ:
16. ՀՀԱԱ որակավորման դասընթացների մասնակցության վճարները սահմանվում են “Հաշվապահության ուսումնահրատարակչական կենտրոն” ՀՈՒՀԿ ՍՊԸ տնօրինության կողմից` համաձայնեցնելով ՀՀԱԱ գործադիր տնօրինության հետ:
17. ՀՀԱԱ որակավորման համակարգի **քննությունները** կազմակերպվում են տարին երկու անգամ` փետրվար-մարտ և հուլիս-օգոստոս ամիսներին:
18. ՀՀԱԱ որակավորման համակարգի քննություններին կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:
19. ՀՀԱԱ որակավորման համակարգի քննություններին մասնակցելու համար դիմորդը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը`
  - 19.1 դիմում (հավելված 3)
  - 19.2 անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճեն, եթե չի մասնակցել դասընթացին,
  - 19.3 լուսանկար 1 հատ` 3 x 4 չափի, եթե չի մասնակցել դասընթացին,
  - 19.4 քննության մասնակցության համար վճարումը հավաստող փաստաթուղթ:
20. ՀՀԱԱ որակավորման համակարգի քննությունների մասնակցության վճարները սահմանվում են ՀՀԱԱ գործադիր տնօրինության կողմից` համաձայնեցնելով ՀՀԱԱ Խորհրդի հետ:
21. ՀՀԱԱ որակավորման համակարգի քննությունները կազմակերպվում են “ՀՀԱԱ որակավորման քննությունների անցկացման կարգ”-ի համապատասխան (Հաստատված է ՀՀԱԱ Խորհրդի 04.06.2013թ.-ի թիվ 6 նիստում):

22. Քննությունների վերահսկողությունը իրականացնում է ՀՀԱԱ քննական հանձնաժողովը:
23. ՀՀԱԱ որակավորման համակարգի մասնակցին որակավորման քննությունից (քննություններից) ազատելու հետ կապված հարցերը կանոնակարգվում են *“ՀՀԱԱ որակավորման քննություններից ազատումներ շնորհելու կարգ”*-ով (Հաստատված է ՀՀԱԱ Խորհրդի 05.02.2013թ.-ի թիվ 1 նիստում):
24. ՀՀԱԱ **“Որակավորված աուդիտոր”**-ի որակավորում ունեցող անձիք բրիտանական Երդվյալ Որակավորված Հաշվապահների Ասոցիացիայի գործող որոշման հիման վրա կարող են ստանալ ազատումներ Երդվյալ Որակավորված Հաշվապահների Ասոցիացիայի` Association of Chartered Certified Accountants (ACCA) 8 (ութ) քննություններից:

***Գլուխ 3. ՀՀԱԱ որակավորման համակարգի մասնակիցների անդամակցությունը Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիային***

25. ՀՀԱԱ **“Վկայագրված հաշվետար”**-ի որակավորում ունեցող անձը, ով դարձել է ՀՀԱԱ անդամության թեկնածու, այդ կարգավիճակը պահելու նպատակով կամ ՀՀԱԱ (լիիրավ) անդամ դառնալու համար 5 տարվա ընթացքում պետք է ստանա ՀՀԱԱ **“Որակավորված հաշվապահ”**-ի կամ **“Որակավորված աուդիտոր”**-ի որակավորում:
26. ՀՀԱԱ **“Որակավորված հաշվապահ”**-ի և **“Որակավորված աուդիտոր”**-ի որակավորում ունեցող անձիք կարող են դառնալ ՀՀԱԱ (լիիրավ) անդամ (ՀՀԱԱ կանոնադրություն, հոդված 7.3)
27. ՀՀԱԱ **“Որակավորված հաշվապահ”**-ի և **“Որակավորված աուդիտոր”**-ի որակավորումներ ունեցող անձը, ով դառնում է ՀՀԱԱ անդամ, պարտավոր է պահպանել շարունակական մասնագիտական զարգացման պահանջները: Տարեկան շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումների պարտադիր մասնակցության նվազագույն ժամաքանակը սահմանված է 40 ժամ: Շարունակական մասնագիտական զարգացման պահանջները կանոնակարգվում են *“ՀՀԱԱ շարունակական մասնագիտական զարգացման ընթացակարգ”*-ով (Հաստատված է ՀՀԱԱ Խորհրդի 07.05.2004թ.-ի թիվ 5 նիստում):

**ՀՀԱԱ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**  
**Առարկա 1.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**

***Դասընթացի նպատակը***

Ապահովել գիտելիքներ և հմտություններ հաշվապահական հաշվառման բնագավառում, որոնք հնարավորություն են ընձեռում՝

- գրանցել տնտեսական գործառնությունները կրկնակի գրանցման եղանակով,
- պատրաստել կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվություններ ՖՀՄՄ-ներին համապատասխան,
- վերլուծել ֆինանսական հաշվետվությունները:

***Դասընթացի բովանդակությունը***

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

- Ձեռնարկատիրական գործունեության տեսակներ
- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների հիմնադրամ (ՖՀՄՄՀ)
- Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման սկզբունքներ
- Հաշվապահական հաշիվներ և կրկնակի գրանցում

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՐԿԱԾՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

- Ոչ ընթացիկ ակտիվներ
- Ընթացիկ ակտիվներ
- Ընթացիկ պարտավորություններ
- Ոչ ընթացիկ պարտավորություններ
- Մեփական կապիտալ
- Պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ և հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ֆինանսական հաշվետվությունների նպատակը/ Ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները և նրանց անհրաժեշտ տեղեկատվությունը.

- Ֆինանսական հաշվետվությունների հիմնական բնութագիրը
- Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում
- Պարզ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

- Տինանսական գործակիցներ, դրանց մեկնաբանումը և վերլուծությունը

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ**

- Փաստաթղթավորում և գործարքների գրանցում

***Գնահատման մեթոդը***

Ուսանողները պետք է հանձնեն քննություն՝ կազմված բազմակի ընտրության հարցերից /առավելագույնը միավորների 50%/ և գործնական տիպի խնդիրներից:

Քննությունը համարվում է հանձնած, եթե մասնակիցը 100 հնարավոր միավորից հավաքել է 50 և ավելի միավոր:

## **Առարկա 1.2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ**

### ***Դասընթացի նպատակը***

Ապահովել գիտելիքներ և հմտություններ, որոնք հնարավորություն են տալիս օգտագործել ֆինանսական տեղեկատվությունը՝

- Կազմակերպությունների արտադրանքի և մատուցած ծառայությունների ինքնարժեքը հաշվարկելու համար
- կառավարչական որոշումներ ընդունելու համար:
- կազմակերպությունների տնտեսական գործունեության պլանավորման, վերահսկողության, մոնիտորինգի համար,

### ***Դասընթացի բովանդակությունը***

**ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

- Հաշվապահական հաշվառում կառավարման համար
- Տեղեկատվություն կառավարման համար
- Կառավարչական տեղեկատվական համակարգերը
- Ինքնարժեքի հաշվառում և ինքնարժեքի տարրերը
- Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը կառավարման համակարգում

**ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ**

- Ծախսումների դասակարգումը
  - Արտադրական ծախսումներ
  - Ժամանակաշրջանի ծախսեր
- Ծախսումների այլ դասակարգում
- Ծախսումների վարքագիծը: Փոփոխական և հաստատուն բաղադրիչների տարանջատումը
- Նյութական ծախսումներ
- Աշխատանքային ծախսումներ
- Վերադիր ծախսումների բաշխումը և կլանումը
- Ինքնարժեքի հաշվարկում սահմանային ծախսերի (variable costing) և ծախսերի լրիվ կլանման (absorption costing) մեթոդների միջոցով
- Ինքնարժեքի հաշվարկման համակարգեր
  - Առանձին պատվերի (Job) և խմբաքանակի (Batch) ինքնարժեքի կալկուլյացիա
  - Փուլային կալկուլյացիա (Process costing)
  - Ծառայությունների/սպասարկման ծախսումներ (Service Costing)



#### ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՅՈՒՄ

- Ծախսումներ – Ծավալ – Շահույթ (CVP) վերլուծություն
- Սահմանափակող գործոններ
- Որոշումների կայացմանն առնչվող ծախսեր
- Գնագոյացում

#### ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ և ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

- Ծախսերի նորմատիվային հաշվառում (Standard costing)
  - Նորմատիվների տեսակները
  - Ողղակի փոփոխական ծախսերի շեղումները
  - Հաստատուն վերադիր ծախսերի շեղումները
  - Հասույթի շեղումները
  - Փոխհամաձայնեցման հաշվետվության կազմումը

#### ***Գնահատման մեթոդը***

Ուսանողները պետք է հանձնեն քննություն՝ մասամբ կազմված բազմակի ընտրության հարցերից (25 հարց՝ 50 միավոր) և գործնական տիպի խնդիրներից (5 խնդիր՝ 50 միավոր):

Քննությունը համարվում է հանձնած, եթե մասնակիցը 100 հնարավոր միավորից հավաքել է 50 և ավելի միավոր:

## Առարկա 2.1 ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

### *Դասընթացի նպատակը*

Իրավագիտության և ՀՀ տնտեսական իրավունքի բնագավառում ապահովել գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են հաշվապահին իր մասնագիտական գործունեությունը ծավալելու համար:

### *Դասընթացի բովանդակությունը*

#### ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Քաղաքացիներ
- Իրավաբանական անձինք
- Առևտրային կազմակերպություններ
- Տնտեսական ընկերություններ
- Առևտրային կոոպերատիվներ
- Քաղաքացիական իրավունքի օբյեկտները
- Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին

#### ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

- Պայմանագրի հասկացությունը
- Պայմանագրի կնքելը, պայմանագրի փոփոխելը և դադարելը
- Պայմանագրի պայմանները, ձևը և մեկնաբանումը
- Անվավեր պայմանագրեր
- Պամանագրերի առանձին տեսակներ
- Սեփականության և այլ գույքային իրավունքներ
- Գործարք, ներկայացուցչություն, ժամկետներ, հայցային վաղեմություն

#### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐ

- Անվճարունակություն/«Սնանկության մասին» ՀՀ օրենք
- Աշխատանքային իրավունք/ՀՀ աշխատանքային օրենսգիրք
- Վարչական իրավունք/«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք/Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք

- Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը/ Ղատական իշխանությունը  
և դատական համակարգը/ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք/ՀՀ  
վարչական դատավարության օրենսգիրք
- Լիցենզավորման իրավունք/«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք
- Օտարերկրյա ներդրումներ/«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք

#### ***Գնահատման մեթոդը***

Ուսանողները պետք է հանձնեն քննություն մասամբ կազմված հարցերից և գործնական տիպի խնդիրներից: Քննությունը համարվում է հանձնած, եթե մասնակիցը 100 հնարավոր միավորից հավաքել է 50 և ավելի միավոր:

## **Առարկա 2.2 ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ**

### **Դասընթացի նպատակը**

ՀՀ հարկային օրենսդրության բնագավառում ապահովել գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են հաշվապահին հարկերը և օրենքով նախատեսված այլ պարտադիր վճարները հաշվարկելու, վճարելու և համապատասխան հաշվարկներն ու հաշվետվությունները ներկայացնելու համար:

### **Դասընթացի բովանդակությունը**

#### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

- ՀՀ հարկային օրենսդրության հիմունքները

#### **ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐ**

- Շահութահարկ
- Եկամտային հարկ

#### **ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐ**

- Ավելացված արժեքի հարկ
- Ակցիզային հարկ

#### **ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՎՃԱՐՆԵՐ**

- Շրջանառության հարկ
- Հաստատագրված վճարներ
- Արտոնագրային վճարներ

#### **ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐ**

- Գույքահարկ
- Հողի հարկ

#### **ՊԵՏԱԿԱՆ և ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ, ՎՃԱՐՆԵՐ**

- Պետական տուրք
- Տեղական տուրքեր և վճարներ
- Մաքսատուրքեր և մաքսավճարներ
- Ճանապարհային, բնապահպանական և բնօգտագործման վճարներ

#### **ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ**

- Ֆիզիկական անձանց կուտակային վճարները

### **Գնահատման մեթոդը**

Ուսանողները պետք է հանձնեն քննություն կազմված գործնական տիպի խնդիրներից: Քննությունը համարվում է հանձնած, եթե մասնակիցը 100 հնարավոր միավորից հավաքել է 50 և ավելի միավոր:

### **Առարկա 2.3 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

#### ***Դասընթացի նպատակը***

- զարգացնել ֆինանսական կառավարման գիտելիքներ և մեթոդներ՝ տարբեր ֆինանսավորման աղբյուրների և կապիտալ ներդրումների հնարավորությունների առավելությունները վերլուծելու և կիրառելու համար,
- ֆինանսական կառավարման բնագավառում ապահովել է խորացված գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են հաշվապահին և ֆինանսիստին իրենց մասնագիտական գործունեությունները ծավալելու համար,
- կառավարչական հաշվառման մեթոդները կիրառել ձեռնարկատիրական գործունեության պլանավորման և վերահսկողության համար:

#### ***Դասընթացի բովանդակությունը***

##### **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

- Տնտեսական միջավայրի բնութագրերը: Պետական միջամտությունը և կարգավորումը
- Ֆինանսական կառավարման նպատակները
- Ֆինանսական կառավարման միջավայրը
- Ֆինանսական մաթեմատիկայի հիմունքները
- Ֆինանսական վերլուծության հիմունքները
- Շրջանառու կապիտալի կառավարում
  - Ամբողջական մոտեցում: Գործառնական ցիկլ
  - Պաշարների կառավարում
  - Դեբիտորների և կրեդիտորների կառավարում
  - Կանխիկի կառավարում
- Ֆինանսավորման աղբյուրները
  - Բաժնետիրական կապիտալի աղբյուրներ
  - Պարտքային ֆինանսավորման աղբյուրներ
  - Ֆինանսավորման այլ ձևեր
  - Որոշումներ կապիտալի կառուցվածքի վերաբերյալ
- Ֆինանսական և գործառնական լծակ
- Կապիտալ ներդրումների խորացված գնահատում
  - Ներդրումների գնահատման մեթոդները
  - ֆինանսավորման մեթոդի ընտրությունը
  - Ներդրումային նախագծերի ընտրությունը կապիտալի չափավորման դեպքում
  - Ներդրումների գնահատումը անորոշության պայմաններում

**ԽՈՐԱՑՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ**

- Ինքնարժեքի կալկուլյացիայի մեթոդներ, արդի իրավիճակը այդ ոլորտում
- Անուղղակի ինքնարժեքի ձևավորման մեթոդներ. ABC մեթոդ
- Հատուկ պատվերի և ծառայությունների ինքնարժեքի կալկուլյացիա
- Փուլային կալկուլյացիա
- Նորմատիվային (ստանդարտ) ծախսումներ և շեղումների վերլուծություն
- Բյուջեի պլանավորում
- Այլընտրանքային բյուջետային համակարգեր
- Ինքնարժեք և որոշումների կայացում

***Գնահատման մեթոդը***

Ուսանողները պետք է հանձնեն քննություն կազմված գործնական տիպի խնդիրներից:  
Քննությունը համարվում է հանձնած, եթե մասնակիցը 100 հնարավոր միավորից  
հավաքել է 50 և ավելի միավոր:

## **Առարկա 2.4 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

### ***Դասընթացի նպատակը***

Այս դասընթացը հիմնված է 1.1 “Ֆինանսական հաշվառման հիմունքներ” դասընթացի վրա և ապահովում է խորացված գիտելիքներ և հմտություններ հաշվապահական հաշվառման կարգավորող համակարգի, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համապատասխան առանձին և համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների վերլուծության վերաբերյալ:

### ***Դասընթացի բովանդակությունը***

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ և ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՄԱԿԱՐԳ

- Հիմնական դրույթներ և կարգավորող համակարգ,
- Ֆինանսական հաշվետվողականություն,
- Հաշվետվությունների պատրաստում.
  - Ֆինանսական վիճակի մասին,
  - Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին,
  - Սեփական կապիտալում փոփոխությունների մասին;

### **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Դրամական հոսքերի մասին հաշվետվության պատրաստում անուղակի մեթոդով,
- Ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն և մեկնաբանության,
- Մեկ բաժնետոմսին բաշվող շահույթի հաշվարկում:

### **ԱՌԱՆՁԻՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԵՎ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՖՀՄՍ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ**

- հիմնական միջոցներ, վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվներ
- ոչ նյութական ակտիվներ, հետազոտություն և մշակում, պաշարներ
- փոխառության ծախսումներ, արտաժողովի փոխարժեքի փոփոխությունների ազդեցություն;
- արժեզրկում, պայմանական դեպքեր, կապակցված կողմերի բացահայտում, հետագա դեպքերի ազդեցություն;
- հասույթ, սեզմենտային տեղեկատվություն,

### **ԽՄԲԵՐ, ՀԱՄԱԽՄԲՈՒՄ, ԲԱԺՆԵՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ**

« Հայաստանի հաշվապահների  
և աուդիտորների ասոցիացիայի»  
խորհրդի «11» հուլիսի 2013թ N 8 նիստով հաստատված  
“Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա”  
հասարակական կազմակերպության /ՀՀԱԱ/ որակավորման համակարգի  
կանոնակարգի  
**Հավելված 1**

- Խմբի հաշվառում, համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում,
- Ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումների հաշվառում,

***Գնահատման մեթոդը***

Ուսանողները պետք է հանձնեն քննություն կազմված գործնական տիպի խնդիրներից: Քննությունը համարվում է հանձնած, եթե մասնակիցը 100 հնարավոր միավորից հավաքել է 50 և ավելի միավոր:



### **Առարկա 3.1 ԱՌԻԴԻՏ և ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

#### ***Դասընթացի նպատակը՝***

- ապահովել գիտելիքներ և հմտություններ՝ աուդիտի միջազգային ստանդարտները կիրառելու համար,
- ապահովել տեսական հիմքեր՝ որակյալ աուդիտորական գործունեություն իրականացնելու համար,
- ապահովել տեսական հիմքեր աուդիտի գործնական դասընթացին աջակցելու համար:

#### ***Դասընթացի բովանդակությունը***

##### **ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՈՒՆՔՆԵՐ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՍՏԱՆՁՆՈՒՄ**

- Կարգավորումը և շրջանակները,
- Աուդիտի էթիկայի կանոնները,
- Անկախություն, պատվիրատուների ընդունում և շարունակում,
- Նամակ-պարտավորագիր:
- 

##### **ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

- Աուդիտի գործընթացը՝ պլանավորում, ապացույցների հավաքում և ամփոփում,
- Աուդիտի ռիսկերի որոշում, փաստաթղթավորում և ռիսկերին արձագանքում,
- Էականություն, գնահատված էականության կիրառում պլանավորման, ապացույցների հավաքման և ամփոփման փուլում,
- Խարդախության և սխալների ռիսկի գնահատում,
- Վերահսկողության միջավայրի տարրերը, փաստաթղթավորում:

##### **ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ**

- Աուդիտորական ապացույցների հավաքման ընթացակարգեր,
- Աուդիտորական ապացույցների համապատասխանություն և բավականաչափ լինելը,
- Աուդիտորական ընտրանք,
- Առանձին հոդվածների գծով աուդիտորական ապացույցներ, ներառյալ արտաքին հավաստիացումներ,
- Վերահսկողության թեւթեր,
- Վերլուծական ընթացակարգեր:

##### **ԱՍՓՈՓՈՒՄ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

- Հաղորդակցություն պատվիրատուի ղեկավարության հետ,

« Հայաստանի հաշվապահների  
և աուդիտորների ասոցիացիայի»  
խորհրդի «11» հուլիսի 2013թ N 8 նիստով հաստատված  
“Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա”  
հասարակական կազմակերպության /ՀՀԱԱ/ որակավորման համակարգի  
կանոնակարգի  
**Հավելված 1**

- Աուդիտորական եզրակացությունների տեսակները և կիրառման հանգամանքները;

***Գնահատման մեթոդը***

Ուսանողները պետք է հանձնեն քննություն կազմված գործնական տիպի խնդիրներից:  
Քննությունը համարվում է հանձնած, եթե մասնակիցը 100 հնարավոր միավորից  
հավաքել է 50 և ավելի միավոր:

« Հայաստանի հաշվապահների  
և աուդիտորների ասոցիացիայի»  
խորհրդի «11» հուլիսի 2013թ  
N 8 նիստով հաստատված  
“Հայաստանի հաշվապահների և  
աուդիտորների ասոցիացիա”  
հասարակական կազմակերպության  
/ՀՀԱԱ/ որակավորման համակարգի  
կանոնակարգի  
**Հավելված 2**

ՀՀԱԱ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԴԻՄՈՒՄ

1. Որ դասընթաց(ներ)ի համար եք դիմում (խնդրում ենք նշել դասընթաց(ներ)ի  
անվանումը)

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

2. Դիմորդի ազգանունը, անունը, հայրանունը

\_\_\_\_\_

ազգանուն	անուն	հայրանուն
----------	-------	-----------

3. Դիմորդի անձնագրի համարը \_\_\_\_\_

4. Բնակության հասցեն

Երկիր \_\_\_\_\_ Փոստային ինդեքս \_\_\_\_\_

Շրջան \_\_\_\_\_ Քաղաք/գյուղ \_\_\_\_\_

Փողոց \_\_\_\_\_ Բնակարանի համար \_\_\_\_\_

Շենք/տուն \_\_\_\_\_ Հեռախոսի համար \_\_\_\_\_

Էլեկտրոնային փոստ \_\_\_\_\_

5. Տեղեկություն աշխատանքի (զբաղվածության) մասին

Եթե աշխատում եք, ապա խնդրում ենք լրացնել ստորև.

Կազմակերպության անվանումը \_\_\_\_\_

Զբաղեցրած պաշտոնը \_\_\_\_\_

Զբաղվածությունը \_\_\_\_\_

Ստորագրություն

Ամսաթիվ

ՀՀԱԱ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ

1. Ազգանուն, անուն, հայրանուն  

---
2. Որ քննությունների համար եք դիմում (խնդրում ենք նշել առարկաների անվանումները)
  1. \_\_\_\_\_ 3.
  2. \_\_\_\_\_ 4.
3. Ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի)
4. Անձնագրի (անձը հաստատող այլ փաստաթղթի) տվյալները
5. Բնակության հասցե
6. Հեռախոսահամարներ \_\_\_\_\_  
(տուն) (աշխատանքային) (բջջային)
7. Էլ-փոստի հասցե \_\_\_\_\_
8. Եթե աշխատում եք, ապա նշեք աշխատանքի վայրը, պաշտոնը  

---
9. Եթե ինքնազբաղված եք, խնդրում ենք նշել տեղեկություն ինքնազբաղվածության վերաբերյալ
10. Նշեք Ձեր կրթությունը  

---

Ուսումնական հաստատությունը

Մասնագիտացում

Ընդուն. ամսաթիվ

Ավարտ. ամսաթիվ

Ստորագրություն

Ամսաթիվ